ԹՊԿ-ի ինտեգրման հայեցակարգի ճգնաժամի մասին

ԱՌՎԱԿ կենտրոնի մեկնաբանությունը, 16.11.2026 թ.[1]

Անոտացիա

ԱՌՎԱԿ կենտրոնը վերլուծում է Անկարայում Թյուրքական պետությունների կազմակերպության 13-րդ գագաթնաժողովի արդյունքները: Դիտարկվում են միավորման առանցքային մասնակիցների միջև տարաձայնությունները. ձևաչափը քաղաքականացնելու և ռազմականացնելու Թուրքիայի ձգտումը բախվել է Ղազախստանի և Ուզբեկստանի դիրքորոշմանը, որոնք պաշտպանում են բացառապես առևտրատնտեսական ու մշակութային-մարդասիրական համագործակցության ուղեգծերը: Հատուկ ուշադրություն է դարձվել «ԹՊԿ+» ձևաչափում ՌԴ-ին ներգրավելու Աստանայի նախաձեռնությանը, Ադրբեջանի դիվանագիտական դեմարշին և «Մեծ Թուրանի» հայեցակարգի իրականացումը սահմանափակող արտաքին գործոններին:

Բանալի բառեր. *Թյուրքական պետությունների կազմակերպություն (ԹՊԿ), Անկարայի գագաթնաժողով, Թուրքիա, Ղազախստան, Ուզբեկստան, Ադրբեջան, Ռուսաստան, Մեծ Թուրան, Եվրասիական ինտեգրում, բազմավեկտորային քաղաքականություն:*

1. Տարաձայնությունները ԹՊԿ-ի 13-րդ գագաթնաժողովում. տնտեսությունն ընդդեմ ռազմականացման

Հակառակ 2026 թ. հոկտեմբերի 30–ին «Թյուրքական դար. միասնություն լեզվով, մտքով և գործով» նշանաբանով կայացած 13-րդ գագաթնաժողովի արդյունքներով թյուրքական ինտեգրման նոր փուլ դուրս գալու մասին Թյուրքական պետությունների կազմակերպության (ԹՊԿ) անդամ պետությունների կառավարությունների պաշտոնական ամփոփիչ հաղորդագրության, Անկարայում կայացած համաժողովին չի հաջողվել թաքցնել կողմերի միջև առկա տարաձայնությունների խորությունը: Ստեղծված իրավիճակը կասկածի տակ է դնում տվյալ ձևաչափի ծավալուն քաղաքականացման և ռազմականացման հեռանկարների իրատեսությունը, որին ձգտում է թուրքական կողմը: Գագաթնաժողովի արդյունքները ցույց տվեցին, որ Կենտրոնական Ասիայի առանցքային պետությունները՝ Ուզբեկստանը և Ղազախստանը, աջակցում են բացառապես ինտեգրման գործընթացների տնտեսական ուղեգծին և մշակութային-մարդասիրական կապերի զարգացմանը՝ միաժամանակ մերժելով միավորումը ռազմաքաղաքական բլոկի վերածելու հայեցակարգը: Այս դիրքորոշումը հստակ ձևակերպվել է Ուզբեկստանի նախագահ Շավքաթ Միրզիյոևի և Ղազախստանի նախագահ Կասիմ–Ժոմարտ Տոկաևի ելույթներում:

Ուզբեկստանի ղեկավարն իր ելույթը նվիրել է հիմնականում ԹՊԿ-ի մասնակից պետությունների առևտրատնտեսական և ֆինանսական ինտեգրման հեռանկարներին: Դրանով նշվել է ինտեգրված փոխգործակցության ընդլայնման թույլատրելի սահմանը, ինչպես նաև արտահայտվել այն դիրքորոշումը, ըստ որի ազգային-լեզվական և մշակութային ընդհանրությունները դիտարկվում են բացառապես որպես թյուրքական տարածքի շրջանակներում առաջընթացի, զարգացման և բարգավաճման հասնելու արդյունավետ

[1] Նյութի բնօրինակը (ռուս.) հրապարակվել է մեր կայքէջում 12.11.2026 թ.:

գործիքներ: Այս համատեքստում Շ. Միրզիյոևը կոնկրետ նախաձեռնություններ է առաջադրել «Թյուրքական ներդրումային հիմնադրամի» և «Թյուրքական զարգացման բանկի» ստեղծման վերաբերյալ, ինչպես նաև կրկին ուշադրությունը կենտրոնացրել է «Թյուրքական պետությունների լոգիստիկ համալիրների ցանցի» և «Թյուրքական թվային միջանցքի» ձևավորման գործընթացների ակտիվացման անհրաժեշտության վրա: Բացի այդ, Ուզբեկստանի ղեկավարն առաջարկել է ընդունել «Թյուրքական աշխարհ–100» ծրագիրը, որը նախատեսում է 100 համատեղ ռազմավարական ներդրումային և արդյունաբերական նախագծերի իրականացում, այդ թվում՝ հազվագյուտ հանքանյութերի վերամշակման և «*կանաչ էներգետիկայի*» համար սարքավորումների արտադրության տեղայնացման ոլորտում:

2. Ուզբեկստանի նախաձեռնությունները. գործնականություն և «ԹՊԿ+» ձևաչափ

Ընդգծելով Տաշքենդի հավատարմությունը ԹՊԿ-ի կառուցվածքային զարգացման մեջ առևտրատնտեսական գործոնի առաջնահերթության հայեցակարգին, ինչպես նաև ազգային-լեզվական միասնական շրջանակներից դուրս ինտեգրացիոն համագործակցության ընդլայնմանը՝ Շ. Միրզիյոևն առաջարկել է համագործակցություն ծավալել «*երրորդ երկրների*» հետ «ԹՊԿ+» ձևաչափի շրջանակներում: Նա հանդես է եկել այս գործընթացը նախարարական մակարդակով ճյուղային հանդիպումներով մեկնարկելու նախաձեռնությամբ՝ նշելով, որ նման երկխոսությունը պետք է կենտրոնանա առևտրի, լոգիստիկայի և ներդրումների ոլորտներում համատեղ ծրագրերի գործնական իրականացման վրա:

Ղազախստանի նախագահի ելույթում արտահայտված դրույթները պարունակում էին ԹՊԿ-ն թյուրքական ռազմաքաղաքական դաշինքի վերածելու նպատակով նրա ներուժի օգտագործման անթույլատրելիության հստակ և սկզբունքային գնահատական: Թեև Կ.–Ժ. Տոկաևը կոնկրետ երկրներ չնշեց, փորձագիտական համայնքը միահամուռ կարծիք է հայտնում, որ նման նախաձեռնությունների հիմնական աղբյուրը Անկարան է: Վերլուծաբանների և ՋԼՄ-ների համոզմամբ՝ Ղազախստանի առաջնորդը «*հեռակա բանավեճի մեջ մտավ նրանց հետ, ովքեր փորձում էին քաղաքականացնել կազմակերպության օրակարգը և առաջ մղել ռազմական ծրագրերը*»: Ելույթում առանձնակի շեշտվեց, որ ԹՊԿ-ի առանցքային առաքելությունը տնտեսական, գիտական և կրթական համատեղ նախաձեռնությունների զարգացումն է:

3. Ղազախստանի դիրքորոշումը. ռազմաքաղաքական դաշինքի անընդունելիությունը

2026 թ. մայիսի կեսերին Թուրքեստանում (Ղազախստան) կայացած Թյուրքական պետությունների կազմակերպության ոչ պաշտոնական գագաթնաժողովում, որտեղ քննարկվում էին ինտեգրացիոն տիրույթում թվայնացման և արհեստական բանականության ներդրման խնդիրները, Կ.–Ժ. Տոկաևի ներկայացրած հայեցակարգային թեզերը մեծապես արտացոլվեցին նաև Անկարայում ունեցած նրա ելույթի առանցքային դրույթներում: «ԹՊԿ գագաթնաժողովը Թուրքիայում. «թվային միջանցքը» և ղազախա-

թուրքական մասնաճյուղերի ճգնաժամը» հոդվածում (2026 թ. մայիսի 30) ԱՌՎԱԿ կենտրոնն արդեն վերլուծել էր թուրքմենական ֆորումի ընթացքում Ղազախստանի ղեկավարության կողմից հղված ազդակները: Աստանայի հիշյալ նախաձեռնությունները հստակ ցույց էին տալիս նրա ձգտումը՝ չեզոքացնելու ԹՊԿ-ում սեփական գերիշխանությունն ամրապնդելու Անկարայի ճիգերը և կանխելու կառույցի վերածումը թուրքամետ ռազմաքաղաքական դաշինքի:

Անկարայում տեղի ունեցած 13-րդ գագաթնաժողովի ընթացքում Ղազախստանի նախագահի ելույթն ավելի ամրապնդեց իր վաղօրոք հայտնած մոտեցումը: Ըստ այդ դիրքորոշման՝ Թյուրքական պետությունների կազմակերպությունը պետք է գործի միայն տնտեսական ու մշակութային ինտեգրման շրջանակներում՝ նպաստելով եվրասիական տարածաշրջանում խաղաղությանը, բարգավաճմանն ու արդար մրցակցությանը: Վերլուծաբանները նշում են, որ Կ.–Ժ. Տոկաևն այս տեսակետը ներկայացրեց առավելագույնս հստակ և աներկբա: Նա անգամ անսպասելի առաջարկ հնչեցրեց մասնակիցների համար՝ *«քննարկել «ԹՊԿ+» ձևաչափով կամ դիտորդի կարգավիճակով Ռուսաստանի Դաշնությանը թյուրքական համագործակցությանը ներգրավելու հնարավորությունը»*: Ղազախստանի ղեկավարն հավելեց, որ տվյալ նախաձեռնությունն ամբողջովին բխում է ԹՊԿ նախագծի նպատակներից ու ոգուց, քանի որ ՌԴ տարածքն ընդգրկում է թյուրքական էթնոսի ձևավորման պատմական միջավայրի զգալի մասը, և Ռուսաստանը պատմամշակութային առումով սերտորեն առնչվում է թյուրքական ինքնության հետ:

4. ՌԴ-ին միացնելու առաջարկը և Անկարայի արձագանքը ԹՊԿ-ի հետագա զարգացման սեփական հայեցակարգի առաջմղման համատեքստում

Կասիմ–Ժոմարտ Տոկաևի կողմից արված հայտարարությունը թուրքական կողմի հետ ընթացող դիվանագիտական վեճում հաշվարկված քայլ էր: Աստանայում մտահոգված են, որ Անկարան ձգտում է թյուրքական համագործակցության հարթակը ծառայեցնել դեռևս ավելի քան մեկ դար առաջ թուրքական որոշ շրջանակներում ձևավորված «*Մեծ Թուրանի*» հայեցակարգին: Ղազախստանի նախագահի այս առաջարկը Թուրքիայի բարձրագույն ղեկավարության շրջանում առաջացրեց զուսպ դժգոհություն, ուստի նրանք խուսափեցին հրապարակային կտրուկ արձագանքներից: Փոխարենը, քննադատության առաջին գծում հայտնվեցին իշխանամերձ արմատական-ազգայնական շրջանակները: Վերջիններս ղազախական նախաձեռնությունը գնահատեցին որպես ինտեգրացիոն կառույցի մեջ արտաքին դերակատարների ներգրավման փորձ: Ըստ «*պանթուրանիզմի*» կողմնակիցների՝ այդ սուբյեկտները հանդիսանում են հիմնական աշխարհաքաղաքական մրցակիցներ և խոչընդոտում են համաթյուրքական միասնության տեսլականին:

Այդուհանդերձ, Թուրքիայի ղեկավար շրջանակների ներկայացուցիչները ևս անհրաժեշտ համարեցին ներգրավվել ընթացող քննարկումներում՝ Ղազախստանի նախագահի առաջարկի վերաբերյալ հայտնելով ավելի զուսպ անհամաձայնություն: Այս

տեսանկյունից հատկանշական է Թուրքիայի իշխող «Արդարություն և զարգացում» կուսակցության (ԱԶԿ) փոխնախագահ Քյուրշադ Զորլուի պաշտոնական դիրքորոշումը: Ըստ նրա՝ «*ԹՊԿ-ում դիտորդի կարգավիճակի կարող են հավակնել բացառապես այն պետությունները, որոնցում թյուրքական կամ դրան հարակից լեզուներից մեկն ունի պետական կամ պաշտոնական լեզվի կարգավիճակ*»: Միևնույն ժամանակ, Զորլուն պատրաստակամություն է հայտնել «*զարգացնելու ԹՊԿ-ի փոխգործակցությունը Ռուսաստանի Դաշնության թյուրքալեզու սուբյեկտների հետ*»: Թուրքական կողմն այս մոտեցման մեջ հակասություն չի տեսնում՝ անտեսելով, որ Անկարայի առաջարկած ձևաչափը կարող է բախվել ՌԴ օրենսդրական նորմերին և Մոսկվայի ռազմավարական շահերին:

Ի պատասխան Կասիմ–Ժոմարտ Տոկաևի առաջարկի՝ ՌԴ նախագահի մամուլի քարտուղար Դմիտրի Պեսկովն անմիջապես արձագանքել է ԹՊԿ-ի շուրջ ծավալված քննարկումներին: Նա նշել է, որ թեև ռուսական կողմը պաշտոնական հրավեր դեռևս չի ստացել, այդուհանդերձ, ընդհանուր առմամբ ընդգծել է. «*Երկրի մասնակցությունը ԹՊԿ-ի աշխատանքներին դրամաբանական և նպատակահարմար կլիներ՝ հաշվի առնելով առկա կապերը*»: Միևնույն ժամանակ, մեկնաբանելով թուրք քաղաքական գործիչների այն գաղափարը, ըստ որի փոխգործակցությունը պետք է ծավալվի ՌԴ առանձին սուբյեկտների հետ, Պեսկովն այդ մոտեցումը որակել է որպես ոչ կառուցողական: ՌԴ նախագահի մամուլի քարտուղարի խոսքով՝ Ռուսաստանը ցանկացած ինտեգրացիոն գործընթաց դիտարկում է բացառապես որպես միասնական պետություն՝ անընդունելի համարելով մշակութային և մարդասիրական կապերի արհեստական «*տրանջատման*» ցանկացած փորձ:

5. Աստանայի պատմամշակութային փաստարկները և ուժերի հավասարակշռումը

Առկա պայմաններում Թուրքիայի ապակառուցողական ծայրահեղ-ազգայնական շրջանակները, որոնք լծակներ ունեն նաև պետական ապարատում, Ղազախստանի ղեկավարի քայլը որակել են որպես թյուրքական միավորման ներսում «*տրոյական ձիու*» տեղադրում: Պանթուրանիզմի գաղափարախոսների ընկալմամբ՝ այդ նախաձեռնությունը նպատակաուղղված է թյուրքական աշխարհի գլխավոր աշխարհաքաղաքական մրցակցի ներգրավմանը, ինչը խաթարում է միասնական թյուրքական տարածքի ամբողջականությունը՝ հակասելով «*պատմական արդարությանը*»:

Անկախ նրանից, թե արդյո՞ք Աստանայի առաջարկը կստանա լիարժեք աջակցություն կամ ինչպիսի՞ քայլերով Անկարան կփորձի արգելափակել Ռուսաստանի ներգրավումը ԹՊԿ-ում որպես միասնական դերակատար, Կասիմ–Ժոմարտ Տոկաևի հակընդդեմ նախաձեռնությունն ինքնին վճռորոշ նշանակություն ունի: Սրանով Ղազախստանի առաջնորդն արտահայտեց Աստանայի հաստատակամ դիրքորոշումը՝ սահմանափակելու Թուրքիայի չափազանցված ազդեցությունը կազմակերպության ներսում և այն համապատասխանեցնելու ղազախական կողմի ռազմավարական շահերին ու հավակնություններին: Հստակ ազդարարելով Կենտրոնական Ասիայում թուրքական

ծավալմանը հակակշռող աշխարհաքաղաքական գործոնների որոնման մասին՝ Ղազախստանն ուղղակիորեն մարտահրավեր նետեց Անկարայի ամբիցիաներին՝ ԹՊԿ-ում անհրաժեշտ ուժային հավասարակշռությունն ու ազդեցությունը պահպանելու նպատակով:

Անկարայի գագաթնաժողովում Կ.–Ժ. Տոկաևի ելույթի հատուկ շեշտադրումը ռուս-ղազախական համատեղ գիտական ծրագրերն էին, որոնք Ռուսաստանի Ալթայի շրջանն ու Արևելյան Ղազախստանի լեռնաշղթաները դիտարկում են որպես նախաթյուրքական էթնոսի ձևավորման պատմական օրրան: Աստանայի հետազոտողների այն թեզերի հետ մեկտեղ, ըստ որոնց ղազախական ինքնությունն ձևավորվել է Ասիայի տափաստանային մշակույթի ու (մոնղոլական) Հորդայի քաղաքակրթության ազդեցությամբ, այս պատմագիտական մոտեցումները խաթարում են Անկարայի հավակնությունները: Դրանք հարցականի տակ են դնում Թուրքիայի առաջնորդությունը ԹՊԿ-ում, ինչպես նաև թյուրքական ինքնության մենաշնորհային կենտրոնի և ինտեգրացիոն գործընթացների գլխավոր շարժիչ ուժի նրա դերը:

Այսպիսով, Աստանան բացահայտորեն մերժում է ԹՊԿ-ի ձևափոխման յուրաքանչյուր փորձ, որը դուրս է գալիս զուտ տնտեսական, մշակութային և մարդասիրական փոխգործակցության սահմաններից: Միևնույն ժամանակ, Ղազախստանը հետևողական քայլեր է ձեռնարկում Թուրքիայի առաջնորդող դիրքերը թուլացնելու ուղղությամբ, քանի որ Անկարայի՝ զարգացման ուղիները միանձնյա սահմանելու և ընդհանուր օրակարգ պարտադրելու ձգտումը բախվում է վճռական հակազդեցության:

Ղազախստանի ղեկավարության վարած քաղաքականության հիմքում ընկած է Կենտրոնական Ասիայում աշխարհաքաղաքական ուժերի հավասարակշռություն ապահովելու ձգտումը: Այն տարածաշրջանում, որտեղ դեռևս պահպանվում է հետխորհրդային Ռուսաստանի ազդեցությունը, իրենց դիրքերն ակտիվորեն ամրապնդում են ՉԺՀ-ն, ԱՄՆ-ը, ԵՄ-ն և Թուրքիան: Նման պայմաններում Աստանան փորձում է գտնել արտաքին առանցքային դերակատարների հետաքրքրությունների օպտիմալ հավասարակշռություն, ինչը բնականաբար ենթադրում է թուրքական ազդեցության սահմանափակում:

Թեև 1990-ական թթ. հիմնադրված Թյուրքական պետությունների համագործակցության խորհրդի հիման վրա ստեղծված Թյուրքական պետությունների կազմակերպությունն ի սկզբանե դիտարկվում էր որպես Մոսկվայի ռևանշիստական ձգտումներին հակակշռող և Աֆղանստանից իսլամական ծայրահեղականության տարածումը խոչընդոտող գործիք, այսօր Ղազախստանի ամրապնդված ընտրանիներն այլևս Անկարայի հովանավորության կարիքը չունեն: Ավելին, Թուրքիայի չափազանցված ներկայությունն սկսում է հակասել Ղազախստանում և ամբողջ տարածաշրջանում Արևմուտքի ու Չինաստանի տնտեսական հետաքրքրություններին:

Բացի այդ, ԹՊԿ շրջանակներում թուրքական նախաձեռնություններն աստիճանաբար խոչընդոտում են ԵԱՏՄ-ում, ՀԱՊԿ-ում և ՇՀԿ-ում Ղազախստանի ստանձնած պարտավորությունների ու շահերի իրականացմանը: Աստանան նախապատվությունը տալիս է բազմավեկտոր համագործակցության ռեսուրսների համաչափ բաշխմանը՝ փորձելով

արտաքին մրցակցությունը ուղղորդել կառուցողական հուն, ինչը լիովին համապատասխանում է ազգային անվտանգության, կայունության և տնտեսական աճի առաջնահերթություններին: Ելնելով սրանից՝ ղազախական կողմն ակնկալում է, որ Անկարան կվերանայի Կենտրոնական Ասիայում իր ունեցած հավակնություններն ու ազդեցության աստիճանը:

Համանման քաղաքականություն է որդեգրել նաև Ուզբեկստանը, որը հանդիսանում է ԹՊԿ մյուս հիմնական դերակատարը: Սկզբնական շրջանում Տաշքենդը բավականին զգուշավոր վերաբերմունք ուներ ինտեգրացիոն այս նախաձեռնության հանդեպ. հանրապետության նախկին ղեկավար Իսլամ Քարիմովը ջանում էր պահպանել Կենտրոնական Ասիայում երկրի առանցքային ազդեցությունը և հակազդում էր տարածաշրջանում թուրքական ներկայության ընդլայնմանը: Ուզբեկստանը ԹՊԿ-ին լիիրավ անդամակցեց միայն 2019 թվականին: Մեկնարկած տնտեսական ազատականացման ու արտաքին կապիտալի ակտիվ ներգրավման համատեքստում երկրի նոր նախագահ Շավքաթ Միրզիյոևը կառույցը դիտարկում էր որպես հավասարակշռող մեխանիզմ, որն ունակ է չեզոքացնելու Վաշինգտոնի և Պեկինի քաղաքական ազդեցության անխուսափելի աճը:

6. Բազմավեկտոր քաղաքականությունը և արտաքին մրցակցությունը

2020 թ. ի վեր Ուզբեկստանը հաջողությամբ արագացրեց տնտեսական փոխգործակցությունը ՉԺՀ-ի և ԱՄՆ-ի հետ՝ ապահովելով համագործակցության ոլորտների համաչափ բաշխում և խուսափելով գերտերությունների միջև առկա հակասություններից: Չինական կողմն իր ներդրումային ջանքերն ուղղեց առևտրային և տրանսպորտալոգիստիկ ծրագրերին (այդ թվում՝ «Միջին միջանցքին»): Իր հերթին, ամերիկյան կողմի հետ համագործակցությունն ընդգրկեց թվայնացման, բարձրտեխնոլոգիական ագրոարդյունաբերական ու արդյունաբերական բնագավառները, ինչպես նաև հազվագյուտ մետաղների հանքավայրերի մշակումը:

Տաշքենդի ձևավորած տնտեսական մրցակցության ու առաջատար տերությունների փոխլրացման ճարտարապետությունը մղում է Ուզբեկստանին վերանայել իր դիրքորոշումը ԹՊԿ-ի և Անկարայի հավակնությունների վերաբերյալ: Սա լիովին բացառում է թյուրքական փոխգործակցությունը ռազմաքաղաքական դաշինքի վերածելու Թուրքիայի ծրագրերի իրագործումը: Աստանայի օրինակով Տաշքենդը նույնպես գտնում է, որ ազգային-լեզվական միասնության վրա հիմնված տնտեսական ինտեգրումից դուրս գալն աննպատակահարմար է, և վերահաստատում է իր պատրաստակամությունը Թուրքիայի հետ ծավալուն տնտեսական գործընկերություն զարգացնելու՝ ի նպաստ տարածաշրջանային կայունության:

Անկարայի գագաթնաժողովում ունեցած իր ելույթում Շ. Միրզիյոևն հստակորեն ընդգծել է այդ մոտեցումը՝ մատնանշելով այն խոստումնալից ոլորտները, որտեղ կազմակերպության մասնակիցները, և հատկապես Թուրքիան, կարող են լիարժեքորեն իրացնել սեփական տնտեսական պոտենցիալը:

Ուզբեկստանի վերլուծական շրջանակների եզրահանգումները, որոնք արտացոլում են ԹՊԿ 13-րդ գագաթնաժողովի արդյունքներն ու Շավքաթ Միրզիյոևի հղած ուղերձները, ուշագրավ դիտարկումներ են պարունակում: Թեև փորձագիտական համայնքը դրական է գնահատել թուրքական հարթակում կայացած քննարկումները, այդուհանդերձ արվել է էական վերապահում: Մասնավորապես, Առաջադիմական բարեփոխումների կենտրոնի վերլուծաբան Օթաբեկ Աքրոմովը, անդրադառնալով Անկարայի գագաթնաժողովին, ընդգծել է, որ ԹՊԿ-ի ներուժի լիարժեք իրացումը հնարավոր է «*միայն այն պարագայում, եթե Թուրքիան՝ որպես կազմակերպության սփվերային առաջնորդ, հրաժարվի մյուսների նկատմամբ «մեծ եղբոր» դեր սրանձնելու ձգտումից և դադարեցնի օրակարգի քաղաքականացումը, ինչպես դա վերջերս դրսևորվում է Կիպրոսի հիմնախնդրի վրա ուշադրություն կենտրոնացնելու միջոցով*»: Ռուսաստանցի փորձագետների գնահատմամբ՝ ուզբեկական վերլուծական հանրության նմանատիպ դիտարկումները «*որոշակիորեն արտահայտում են նաև պաշտոնական Տաշքենդի դիրքորոշումը*»:

7. Ադրբեջանի դեմարշը և կազմակերպության հաստատութենական ճգնաժամը

Ակնհայտ է դառնում, որ ԹՊԿ-ի շրջանակներում սեփական ազդեցության ընդլայնմանն ու կազմակերպությունը վերահսկելի ռազմաքաղաքական դաշինքի վերափոխելուն ուղղված Անկարայի նկրտումները բախվում են լուրջ խոչընդոտների: Ընդ որում, նման հակազդեցությունը չի սահմանափակվում միայն Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու պետություններով: Թուրքական նախաձեռնությունների զսպման հստակ միտումներ է ցուցադրում նաև Ադրբեջանը, որը հանդիսանում է ԹՊԿ աշխարհագրական ու աշխարհաքաղաքական ամբողջականության առանցքային օղակը և Թուրքիայի հիմնական տարածաշրջանային դաշնակիցը, և առանց ում ակտիվ մասնակցության հարթակի գործունեությունն էապես կորցնում է իր իմաստը:

Անկարայում ընթացած ԹՊԿ 13-րդ գագաթնաժողովին նախագահ Իլհամ Ալիևի ցուցադրական չմասնակցելն ավելի ակնառու է ազդարարում հասունացող ճգնաժամի և կառույցի ապագա տեսլականի շուրջ առկա խորքային պառակտման մասին, քան անգամ Շ. Միրզիյոևի ու Կ.–Ժ. Տոկաևի քննադատական դիրքորոշումները: ԱՌՎԱԿ կենտրոնն իր 02.11.2026 թ. «Բաքվի արտաքին քաղաքական ուղեգիծն Առաջավոր Ասիայում սրացման համապատկերում» հետազոտության մեջ, անդրադառնալով Անկարայի և Բաքվի հարաբերությունների ներկայիս սառեցմանը, արդեն նշել էր, որ Ալիևի կողմից Անկարայի գագաթնաժողովի անտեսումը սոսկ անձնական դեմարշ չէ թուրքական ղեկավարության հասցեին: Դա Բաքվի նպատակադրված քայլն է՝ նվազեցնելու ինչպես թյուրքական համերաշխության գաղափարախոսության, այնպես էլ ԹՊԿ-ի՝ որպես կառույցի ռազմավարական նշանակությունը:

Այսպիսով՝ Ադրբեջանի, Ղազախստանի և Ուզբեկստանի գործողությունների համաժամանակյա բնույթն ու դիրքորոշումների նմանությունն ընդգծում են, որ ԹՊԿ-ի

(Թյուրքական պետությունների կազմակերպության) ներսում տարաձայնությունները դուրս են եկել մասնավոր վեճերի շրջանակից: Միավորման ներսում խորը ինստիտուցիոնալ ճգնաժամ է հասունանում: Իրավիճակն է՛լ ավելի է սրվում համագործակցության մասնակիցների շրջանում չճանաչված ՀԿԹՀ-ի («Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետության») կարգավիճակի հանդեպ անբարյացակամ վերաբերմունքով, ինչպես նաև Պետեր Մադյարի գլխավորությամբ եվրոպամետ կառավարության իշխանության գալու կապակցությամբ կազմակերպությունից Հունգարիայի դուրս գալու ռիսկով: Այս բոլոր կուտակված հակասություններն էապես արգելափակում են Անկարայի հավակնությունները՝ խոչընդոտելով ԹՊԿ-ի վերածմանը Թուրքիայի՝ եվրասիական տարածքում ուժի առանցքային կենտրոնի և գլոբալ խաղացողի վերափոխման արդյունավետ մեխանիզմի:

Վերը նշված վարկածը, ըստ որի ԹՊԿ-ի շրջանակներում առկա տարաձայնություններն ու փոխգործակցության կառուցվածքի քայքայումն ունեն ինքնաբուխ ու բացառապես ներքին բնույթ, քիչ համոզիչ է դիտվում: Հիմքեր կան ենթադրելու, որ այդ գործընթացներն ուղղորդվում են արտաքին կենտրոններից: Նման արտաքին համակարգման հիմնական նպատակն է թուրքական քաղաքական խոսույթից պանթուրքիզմի և պանթուրանիզմի ծայրահեղ ազգայնական թեզերի չեզոքացումը՝ Անկարայի ռազմավարական կիզակետը, հավակնություններն ու ներուժն աստիճանաբար տեղափոխելով նեոօսմանյան վերանայումների հուն և ներքաշելով նրան ներիսլամական դիմակայության մեջ: Այս մոտեցման օգտին է փաստում նաև ընթացիկ տարվա ամռանը կնքված Մեքքայի դաշնագիրը («*Ունկի ՆԱՏՕ*»-ի ձևավորման մասին), որն Անկարային ներգրավում է Մերձավոր Արևելքի «*շիական բլոկի*» պետությունների ու խմբավորումների հետ հավանական սրացումների մեջ:

8. Արտաքին քաղաքական համատեքստը և տարածաշրջանային դաշինքների վերաձևավորումը

Արտաքին հիմնական դերակատարների միջև ընթացող ռազմավարական պայքարում Վաշինգտոնի և Թել Ավիվի միասնական դաշինքը ներկայումս ակնհայտ առավելություն է ցուցաբերում բրիտանա-թուրքական տանդեմի նկատմամբ, որը փորձում էր Եվրասիայում ձևավորել ուժերի տարածաշրջանային ազդեցության սեփական մոդելները: Ստեղծված իրողությունների պայմաններում Լոնդոնի աջակցությամբ առաջ մղվող «*Մեծ Թուրանի*» հայեցակարգը բախվում է լուրջ խոչընդոտների՝ աստիճանաբար կորցնելով իր գործնական կենսունակությունը: Ռեսուրսներով հարուստ և ռազմավարական առանցքային նշանակություն ունեցող Կենտրոնական Ասիայում ԱՄՆ նախապատվությունը տալիս է ինքնուրույն քաղաքականության վարմանը՝ խուսափելով Անկարայի հետ հավասարազոր գործընկերային հարաբերություններ հաստատելուց: Փոխարենը, ամերիկյան կողմը ձգտում է թուրքական աշխարհաքաղաքական ակտիվությունը վերաուղղել դեպի Մերձավոր Արևելք՝ ներքաշելով նրան տեղական ներիսլամական հակասությունների ու բախումների հորձանուտ: